

**«ԼՂՅ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԶԵՌԵԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով

15-18 սեպտեմբերի 2016թ.

Արցախ (ԼՂՅ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):**

**ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция

15-18 сентября 2016г.

Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳԱՄ-ՕՄՍԱ

ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ

2016

**Յրատարակության Երաշխավորվել Ստեփանակերտի Մերուպ Մաշտոց  
համայնքանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Мащтоц г.Степанакерта**

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

Լ 657

**Խմբագրական խորհուրդ**

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Հ.Ս.Ավամեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալյայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, բ.գ.դ., պրոֆ. **Մ.Ս.Մարգարյան**, բ.գ.դ. **Ս.Մ.Ավամեսյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Քաղդասարյան**, բ.գ.թ., դոց. **Խ.Յ.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Յայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Նարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

**Редакционная коллегия**

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Բ.Բալայն**, д.ю.н. **Վ.Բ.Գրզծեա**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Գ.Լ.Սարգսյան**, կ.и.ն., доц. **Ն.Է.Բագդասարյան**, կ.п.н., доц. **Խ.Ը.Գալստյան**, կ.э.н., доц. **Ե.Ր.Այրիյան**, կ.ю.н. **Ա.Գ.Արյունյան**, կ.ю.н., доц. **Ա.Ա.Մանասյան**, կ.ю.н., доц. **Ս.Գ.Պետիկյան**

Լ 657 «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածում ներառված են «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

**© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016**

**ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԹԵՇ ԽՈՉԸՆԴՈՏ. ԿՈՍՈՎՈ ԵՎ  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴ**

**Մարինե Կիրակոսյան**

Երևանի Վ. Բյորլուկի անվան լեզվահասարակագիտական համալսարան,  
ՈՕԾՄ՝ Փակուլտետ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդու իրավունքների,  
Ժողովրդավարության և Եվրոպագիտության ամբիոն  
ասպիրանտ (ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ»)  
[kirakosyan.marine@gmail.com](mailto:kirakosyan.marine@gmail.com)

Գիտական դեկան՝ Ք. Գ. Դ., պրոֆեսոր Տիգրան Թորոսյան

Երկու համաշխարհային պատերազմների հետևանքները և, մասնաւորապես, ապագաղութացման գործընթացը պատճառ դարձան տարածքի կառավարման բացառապես պետականակետորուն մոտեցման վերանայմանը: Հակամարտությունների կարգավորման մեխանիզմների շարքում ՄԱԿ-ը ներդրեց տարածքի ժամանակավոր միջազգային կառավարման գաղափարը, որն ուղղված էր հակամարտության տարածքներում խաղաղության վերահսկատառմանն, ինչպես նաև կարգավիճակին առնչվող խնդիրների լուծմանը՝ չճանաչված կամ ճանաչված պետության կառավարման ամբողջական կամ մասնակի իշխանության ժամանակավոր ստանձնման ճանապարհով: Ըստ որում, եթե կիրառման ավելի վաղ փուլում (1945-1991) միջազգային կառավարման օրակարգում գլխավորապես միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը կամ վերահսկատառմանն ուղղված հարցերն էին, ապա 1990-ական թթ. սկզբին սկսեց եաւս կարևորվել նաև կառավարման քաղաքացիական բաղադրիչը՝ հարավոր դարձնելով միջազգային համայնքի ավելի ակտիվ ներգրավվածությունը բուև կարգավորման գործընթացում<sup>1</sup>: Ուստի, ՄԱԿ-ն անցում կատարեց աշակերտության տրամադրման առաքելություններից (Նամիրիա, Արևմտյան Սահարա և այլն)՝ պետության կառուցման և կայացման համընդգրկուն առաքելությունների (Կամբոջա, Սոմալիա, Արևելյան Սլովենիա, Արևելյան Թիմոր, Կոսովո): Ժողովրդավարացման, մարդու իրավունքների պաշտպանության, արդարադատության համակարգի խնդիրները սկսեցին դիտարկվել անվտանգության և կայուն զարգացման ապահովման ավանդական նպատակների հետ միևնույն հարթության վրա<sup>2</sup>: Զգալիորեն ընդլայնվեցին օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները՝ ներառելով գործող օրենսդրության վերանայման և փոփոխման, դատական համակարգի գործունեության

<sup>1</sup> **Zaum D.**, The Sovereignty Paradox: The Norms and Politics of International Statebuilding, US., Oxford University Press, 2007, pp. 54-58.

<sup>2</sup> **Stahn C.**, The Law and Practice of International Territorial Administration: Versailles to Iraq and Beyond, US, Cambridge University Press, 2008, p. 9.

վերահսկման, պետական պաշտոնյաների նշանակման կամ ազատման իրավասությունները: Կառավարման ձևաչափի փոփոխությունների հիմքում ընկած էր այն համոզմունքը, որ ազատական-ժողովրդավարական կառավարման մեխանիզմների արմատավորումը անցումային շրջանում գտնվող տարածքներում կայուն խաղաղության հաստատման լավագույն միջոցն է: Պատերազմի բացակայությունը կամ գինված հակամարտության պայմանական դադարը դեռևս խաղաղության ու կայության երաշխիք չէ: Ապակյալուսացման հավանականության նվազեցման գործում կարևոր են ոչ միայն կարճաժամկետ ճեղքերումները (տարածքից ռազմական ուժերի դուրս բերում, ժամանակավոր հրադադարի հաստատում և այլն), այլև ավելի խորքային խնդիրներին արձագանքումը (կարգավիճակի հետ կապված խնդիրներ, արդյունավետ կառավարում և այլն): Միշագագային կառավարման արդյունավետության մեծացման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի նաև օրակարգային հարցերի սահմանումը, ինչը պետք է ուղղորդվի հակամարտության բնույթով և այն միշագայրի առանձնահատկություններով, որում հաստատվելու է կառավարումը: Այդ առումով առանձնահատուկ նշանակություն ունի Կոսովոյի հակամարտության ուսումնասիրությունը, որտեղ միշագագային կազմակերպությունների դերակատարությունը գգալի էր ներգրավման ծավալների (լիարժեք օրեսդիր, գործադիր և դատական իշխանությունների ստանձնում) և առանձնահատուկ՝ կառավարման հաստատման միշագայրի տեսանկյունից: Նախկինում արտաքին կառավարումը ճճանաչված պետությունների դեպքում կիրառվում էր գերազանցազատ ինքնակառավարման և ինքնակազմակերպման փորձի հսպառ բացակայության արդյունքում առաջ եկած խնդիրներին արձագանքելու համար (Հարավային Սուլդան, Արևմտյան Սահարա, Արևելյան Թիմոր և այլն)<sup>1</sup> որպես գաղութային անցյալի «Ժառանգություն»: Ուստի, դեպքի ուսումնասիրությունը հնարավորություն կտա պարզե՞լ՝ ինչպիսի հեռանկարներ կան այս մեխանիզմի կիրառման համար ապագանութացման համատեքստից դուրս՝ ինքնորշման հակամարտությունների կարգավորման համար: Ուսումնասիրությունը կարող է առարկայական լինել նաև Լեռնային Ղարաբաղի դեպքի համար, քանզի մասնավորապես ապրիլյան քահօրյա պատերազմից հետո միշագային հանրության՝ խնդիրի կարգավորման նկատմամբ հետաքրքրության մեծացման պայմաններում, անհրաժեշտ է դիտարկել բոլոր հավանական սցենարները առաջարկվող լուծումներին համապատասխան արձագանք տալու համար:

Կոսովոյի<sup>1</sup> որպես եզակի դեպքի, կողմանակիցները տարածքի հատուկ կարգավիճակը նշում են այդ եզակիությունը պայմանավորող գործուների շարքում: Յատկանշական է, որ Լեռնային Ղարաբաղում ևս հատուկ կարգավիճակ սահմանվել է դեռևս 1989թ. հունվարին, եթե ԽՍՀՄ ԳԽ

<sup>1</sup> Summers J., Kosovo: A Precedent? The Declaration of Independence, The Advisory opinion and Implications for Statehood, Self-Determination and Minority Rights, Leiden, Martinus Nijhoff Publishers, 2011, pp.382-386; Friedrich J., UNMIK in Kosovo: Struggling with Uncertainty...

որոշմամբ դադարեցվեց ՀԿՄ մարզային խորհրդի գործունեությունը և ստեղծվեց հատուկ կառավարման կոմիտե՝ Մոսկվայի ուղիղ ենթակայությամբ: Դա եղել է Վերջին գործող կարգավիճակը՝ մինչև 1991թ. դեկտեմբերը, երբ տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի անկախության հանրաքվեն: Միաժամանակ, հարկ է հաշվի առնել, որ Կոսովոյում միջազգային կառավարում մտցվեց մարդասիրական աղետը կանխելու համար: Այս դեպքում, երբ միջազգային հանրությունը որևէ գործական քայլ չձեռնարկեց Լեռնային Ղարաբաղում Ադրբեյջանի սասածագերծած պատերազմը դադարեցնելու համար, որի արդյունքում զոհերն ավելի շատ եին, քան Կոսովոյի հակամարտության ժամանակ<sup>1</sup>: Ուստի, ակնհայտ է, որ ոչ թե դեպքն էր եզակի, այլ միջազգային հանրության արձագանքը դեպքին՝ համապատասխան:

Ինքնորշման հակամարտությունների դեպքում ժամանակավոր կառավարման հաստատման համար առանցքային նշանակություն ունի «հյուրընկալող տարածքի» և/կամ մետրոպոլիսի համաձայնության ծեռքբերումը, ինչն, ինչպես նշում է Չոմը, գրեթե ասինար է հետկոնֆիլիկտային պառակտված հասարակությունների դեպքում<sup>2</sup>: Ակնհայտ է, որ դա փոխսպառումային լուծման հասնելու նախնական երաշխիքներից է, սակայն հակամարտության ընթացքով և կողմերի առանձնահատկություններով պայմանավորված կառավարումը կարող է հաստատվել առանց երկկողմ համաձայնության: Արդյուհանդերձ, նույնիսկ այն դեպքերում, երբ մետրոպոլիսն ընդդիմացել է միջազգային կառավարմանը, որի ելքը, որպես կանոն, անկախության հոչակումն է, միջազգային համայնքը, համաձայնությունը ծեռք է բերել «այլընտրանքային ճանապարհով»: Օրինակ, Արևելյան Թիմրի դեպքում միայն այն բանից հետո, երբ ՄԱԿ-ը գգուշացրեց հնդոնեզիային, որ կարող է Վերջինին պատասխանատվության ենթակել ցեղասպանության համար, հնդոնեզիան համաձայնեց Թիմրում հանրաքվե անցկացնելուն և անկախացման օգտին քետարկելու դեպքում՝ ժամանակավոր միջազգային կառավարման հաստատմանը<sup>3</sup>: Կոսովոյի դեպքը ևս հաճախ որպես է որպես «հարաբերականորեն լեզիտիմ»՝ հղում անելով, որ Կուսանությունի համաձայնագիրը, որը կսրվեց 1999թ. հունիսի 9-ին միջազգային անվտանգության ուժերի (KFOR) և Հարավսլավիայի ֆեդերատիվ հանրապետության միջև, և որին անմիջապես հաջորդեց Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևը, ծեռք բերվեց արտաքին պարտադրանքի ճանապարհով<sup>4</sup>: Բանս այն է, որ համաձայնագիրը կսրվեց ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությունից անմիջապես հետո, որը հավանաբար կշարունակվեր, եթե Հարավսլավիայի ֆեդերատիվ հանրա-

<sup>1</sup> **Թորոսյան Տ.**, Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, Տիգրան Մեծ իրատ., 2012, էջ 268:

<sup>2</sup> **Zaum D.**, The Sovereignty...

<sup>3</sup> **Թորոսյան Տ.**, Լեռնային Ղարաբաղ...

<sup>4</sup> **Milano E.**, Security Council Action in the Balkans: Reviewing the Legality of Kosovo's Territorial Status, European Journal of International Law, vol. 14, 5, 2003, pp. 999-1022.

պետությունը հրաժարվեր այն ստորագրել: Նման տեսակետն արդարէ գոյության իրավունք ունի, բայցևանապես չի կարող ծառայել որպես ժամանակավոր կառավարման լեզիտիմության հակափաստարկ, քանզի միջազգային կառավարման հիմնական իրավական աղբյուրը Կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա ընդունած Ակ-ի բանաձևն է<sup>1</sup>: Եթե մետրոպոլիայի համաձայնության ձեռքբերումը օբյեկտիվ պատճառներով ոչ միշտ է հնարավոր, ապա ինքնորոշվող ժողովրդի դեպքում դա պարտադիր պայման է՝ առաջին հերթին ապահովելու միջազգային և տեղի հշխանությունների խաղաղ համակեցությունը: Այն դեպքում, երբ այդ երկուսի միջև առաջանում է պառակտում, ինչն առավել հաճախ օրակարգային հարցերի ոչ հստակ սահմանման և, արդյունքում, կառավարման տևական ընույթի պատճառ է, ինարավոր է նաև գինված բախումների վերսկսում, ինչպես ուղարկություն 2004թ.:

Կոսովոյի հակամարտության կարգավորման վերաբերյալ 2003թ. դեկտեմբերին հրապարակվեց մի փաստաթուղթ, որն արժանացավ ՄԱԿ Ակ-ի հավանությանը: Վերջինս սահմանում էր մասնավորապես ժողովրդավարության և օրենքի գերակայության ոլորտներին վերաբերող չափորոշիչներ, որոնք բավարարելու դեպքում հնարավոր կիներ սկսել կարգավիճակի վերաբերյալ բանակցությունները: Ինչպես արդեն նշվել է, ժողովրդավարական մեխանիզմների արմատավորումը տարածքում տևական խաղաղության պահպանման կարևոր նախապայման է, սակայն այդ ամենը պետք է հաջորդի կամ առևվազն ուղեկցվի տարածքի կարգավիճակի վերաբերյալ բանակցություններին: Դա առավելապես վերաբերում է ինքնորոշման հակամարտություններին, որոնց դեպքում կարգավիճակի անորոշությունը մեծացնում է ցանկացած պահի ռազմական բախումների վերսկսման հավանականությունը: Ուստի, եթե ՄԱԿ-ի ավելի վաղ նախաձեռնությունների դեպքում օբյեկտիվ պատճառներով օրակարգային են համարվել կառավարման հետ կապված խնդիրները, ապա ակնհայտ է, որ նույն մողելի կիրառումը կարող է վտանգավոր լինել ոչ համարժեք դեպքերում: Միայն այն բանից հետո, երբ վերանայվեց «նախ՝ չափորոշիչներ, ապա՝ կարգավիճակ» ռազմավարությունը հնարավոր եղավ առաջընթաց գրանցել կարգավիճակի վերաբերյալ բանակցային գործընթացում, որի արդյունքում 2008թ. հռչակվեց Կոսովոյի անկախությունը: Ըստ որում, եթե Կոսովոյի դեպքում ինչպես անկախությունից առաջ, այնպես էլ հետո ժողովրդավարական սկզբունքների մասին կարելի է խոսել չափազանց մեծ վերապահումներով<sup>2</sup>, ապա չճանաչված Լեռնային Ղարաբաղի գրանցած 25-ամյա պետականության արդյունքներն այդ տեսանկյունից ուշագրավ են: Ուստի, վերջինի դեպքում նույնիսկ ՄԱԿ-ի ներգրավման պարագայում ակնհայտութեն կառավարման քաղաքացիական բաղադրիչը պետք է

<sup>1</sup> **Wolfrum R.**, International Administration in post-Conflict Situations by the United Nations and Other International Actors, max Planck Yearbook of United Nations Law, vol. 9, 2005, pp. 649-696.

<sup>2</sup> Kosovo, Nations in Transit 2016, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2016>.

ուղղորդել եթե ոչ բացառապես, ապա՝ գերազանցապես կարգավիճակի վերաբերյալ խնդիրների լուծմանը:

2016թ ապրիլին մետրոպոլիայի սանձագերծած քաօրյա պատերազմը ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի սարեցման տրամաբանական շարունակությունն էր, որը ցուց տվեց, որ անհրաժեշտ է նոր մեխանիզմների կիրառում հակամարտության կարգավորմանը հետամուտ լինելու համար: Ուստի չի բացառվում, որ առաջարկվող մոտեցումների թվում լինի արտաքին կառավարման մեխանիզմների կիրառումը, մասնավորպես, հաշվի առնելով այս հանգամանքը, որ կարգավորման վերաբերյալ Վերջին՝ «Սադրիդյան», փաստաթղթի սկզբունքներից մեկն ել Ենթադրում է Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ: Միջազգային կարգավիճակի առաջարկության դեպքում մետրոպոլիայի համաձայնությունը կարելի է ի սկզբանե բացառել՝ հաշվի առնելով արտաքին կառավարման նախորդ Ելքերը<sup>1</sup>: Միաժամանակ, ԼՂՀ-ն այդ սցենարի հավանականությունը կարող է դիտարկել առևազն երեք նախապայմանի բավարարման դեպքում: Մադրիդյան փաստաթղթի առաջին սկզբունքի՝ ԼՂ հարակից տարածքների վերադարձի ի սկզբանե բացառում, քաղաքական կարգավիճակի հստակ սահմանում միջազգային մանդատում, ինչը ԼՂ-ի դեպքում լիարժեք անկախությունից բացի այլընտրանք չունի և տեղի իշխանություններին ստանձնած լիազորությունների փոխանցման հստակ ժամանակացույց: Այդ նախապայմանների առկայությունը ենթակա կազմակերպությունների հանգուցալուծումից խուսանակելու հնարավորությունը: Ուստի, չնայած այս հանգամանքին, որ այդ մեխանիզմի կիրառման հեռանկարները ԼՂ հակամարտության կարգավորման շրջանակներում այսօր չեն նշմարվում, անհրաժեշտ է նման ուսումնասիրությունների ճանապարհով դիտարկել խնդիրի կարգավորման հավանական տարրերակների հնարավոր օգուտներն ու վտանգները:

<sup>1</sup> Զճանաշված պետություններում միջազգային կառավարման վեց դեպքերից հինգը պահպանվել է անկախության հոչակմամբ, մեկը (Արևելյան Սյովետնիա)՝ նախկին մետրոպոլիայի հորվաթիայի կազմ վերահստեղում (ըստ նախանշված մանդատի):

## **Մարինե Կիրակոսյան**

**ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՄԱԿՈՒԹՅՈՒՆ, ԹԵՇ ԽՈՉԾՆԴՈՏ. ԿՈՍՈՎՈ և  
ԼԵՌՆԱՅԻՆ ԴՐԱԲԱԴ**

**Բանալի բառեր՝ միջազգային կառավարում, ինքնորոշման հակամարտություն,  
Կոսովո, Լեռնային Ղարաբաղ**

Ապրիլյան քաօրյա պատերազմից հետո Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման նկատմամբ միջազգային հանրության հետաքրքրության կտրուկ մեծացումը ենթադրում է նոր մոտեցումների և սկզբունքների կիրառում: Այդ տեսանկյունից հարկ է ուսումնակիրել նաև տարածքի ժամանակավոր միջազգային կառավարման մեխանիզմը, որը կիրառվեց Կոսովոյի հակամարտության կարգավորման գործընթացում:

Զանգի միջազգային կառավարումը կիրառվում է զինված բախումների վերսկսման հավանականության նվազեցման և պետության կառուցման աջակցության նպատակով, գեկույցը նպատակ ունի պարզել, թե դա որքան արդյունավետ կարող է լինել ԼՂՀ-ի դեպքում, որևէ առանձնահատուկ է, քանզի 25-ամյա աետականության ձեռքբերումները բացառապես տեղի իշխանությունների ակտիվ ջանքերի, հասարակության ինքնակազմակերպման և ռազմական հզոր ներուժի արդյունք են:

## **Марине Кирақосян**

### **МЕЖДУНАРОДНОЕ ТЕРРИТОРИАЛЬНОЕ УПРАВЛЕНИЕ КАК ВОЗМОЖНОСТЬ ИЛИ ПРЕПЯТСТВИЕ ДЛЯ УРЕГУЛИРОВАНИЯ КОНФЛИКТОВ: КОСОВО И НАГОРНЫЙ КАРАБАХ**

**Ключевые слова:** международное управление, конфликт самоопределения, Косово, Нагорный Карабах

После апрельской «четырехдневной войны» резкое повышение интереса со стороны международного сообщества к вопросу урегулирования Нагорно-карабахского конфликта подразумевает применение новых подходов и принципов. Одним из таких является временное международное территориальное управление, который использовался в урегулировании косовского конфликта.

Поскольку международное территориальное управление применяется для уменьшения вероятности возобновления вооруженных столкновений, а также для поддержки государственного строительства, в докладе рассматривается эффективность применения этого механизма в отношении Нагорно-карабахского конфликта. Этот случай является особым поскольку все

достижения 25-летней истории государственности являются плодами активных усилий местных властей, самоорганизации населения и мощного военного потенциала.

*Marine Kirakosyan*

**INTERNATIONAL TERRITORIAL ADMINISTRATION AS A  
POSSIBILITY OR AN OBSTACLE TO CONFLICT RESOLUTION:  
KOSOVO AND NAGORNO-KARABAKH**

**Keywords:** *International administration, self-determination conflict, Kosovo, Nagorno-Karabakh*

The increased attention of the international community towards the Nagorno-Karabakh conflict after the Four-Day April War requires the implementation of new approaches and principles. From this perspective, it is worth studying the international territorial administration deployed in case of Kosovo.

Since the international administration is established to reduce the risk of the armed clashes renewal as well as to promote statebuilding, the report aims to reveal its efficiency level with regard to NKR. This is a unique case for the achievements of the 25-year statehood are exclusively due to the active efforts of the local authorities, self-organization of society and a strong military potential.